ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18-ը հունվարի 2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1. Մասնակցի՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրա ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրա ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Գ. Վարդանյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝** «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը և մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերը առկա են, սակայն դրանցում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեցին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 1-4-րդ չափաբաժինների մասով Ձեր ներկայացված տեխնիկական առաջարկի մեջ բացակայում է <<Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնացնելու համար>>, <<Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով>>, <<Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա մատակարար կազմակերպության տրանսպորտով>> նախադասությունները, իսկ 5-րդ չափաբաժինների մասով Ձեր ներկայացված տեխնիկական առաջարկի մեջ բացակայում է <<Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա մատակարար կազմակերպության տրանսպորտով>> նախադասությունը: Գնահատող հանձնաժողովը 18.01.2019թ. կասեցրել է որակավորման գնահատման նիստը և առաջարկել է մասնակցին համապատասխան ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, այլապես հայտը կմերժվի: 23.01.19թ. գնահատող հանձնաժողովի աշխատանքները շարունակվել են և արձանագրվել է, որ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին:

14.01.18թ. ստացված ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը գնահատվել է նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով:

1.2 23.01.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցն այն չափաբաժիններում, որտեղ նա ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցնող մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել անգործության 10 /տաս/ օրյա ժամկետի ավարտից հետո:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Վարդանյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/34» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնահատող Գ. ՈՒստյան

Հանձնաժողովի քարտուղար Գ. Վարդանյան